

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/7

15 մարտի 2016 թ.

Քննարկվեց քաղաքացի Արթուր Մարդոյանի 22.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 13.10.2015թ-ի թիվ 194/06 որոշման դեմ:

Արթուր Մարդոյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 13.10.2015թ-ի թիվ 194/06 որոշումը կայացվել է Ա/Ձ Կառլեն Մարդոյանի վերաբերյալ:

Արթուր Մարդոյանը, որը հանդիսանում է Կառլեն Մարդոյանի որդին, հայտնում է, որ իր հայրը՝ Կառլեն Մարդոյանը, 27.06.2011թ-ին մահացել է: Հետևապես, նրա նկատմամբ չէր կարող կայացվել գումար գանձելու վերաբերյալ որոշում:

Ելնելով վերոգրյալից՝ Արթուր Մարդոյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 13.10.2015թ-ի թիվ 194/06 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Կառլեն Մարդոյանի (ՀՎՀՀ 03804373) վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 12.10.2015թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 362.474 դրամ, այդ թվում՝ ապառք 78.250 դրամ, տույժ 136.274 դրամ, տուգանք 147.950 դրամ: Պարտավորությունն առաջացել է 2000թ-ի սկսած Ա/Ձ Կառլեն Մարդոյանի կողմից հաշվարկված և հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների, 07.11.2000թ-ի թիվ 000327 ստուգման ակտի, ինչպես նաև հաշվարկված տույժերի արդյունքում:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 13.10.2015թ-ին ընդունվել է թիվ 194/06 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Կառլեն Մարդոյանից 362.474 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Որոշման մեջ սխալ է նշված տնտեսվարող սուբյեկտի կազմակերպչիրավական տեսակը: Մասնավորապես, Որոշման մեջ Ա/Ձ Կառլեն Մարդոյանի փոխարեն պետք է նշվեր «Կառլեն Մարդոյան» ՍՊԸ անվանումը, քանի որ Որոշման մեջ նշված թիվ 03804373 հարկ վճարողի հաշվառման համարով հաշվառված է «Կառլեն Մարդոյան» ՍՊԸ-ն:

«Հարկատու 3» տեղեկատվական ծրագրում առկա տվյալների համաձայն «Կառլեն Մարդոյան» ՍՊԸ-ի տնօրենը հանդիսանում է Ստյոպա Բաղդյանը, որի հասցեով (Կոտայքի մարզ, գ.Գետամեջ) ուղարկվել է Որոշումը: Փոստային ծառայության ծանուցման վերաբերյալ կտրոնի համաձայն, Որոշումը ստորագրությամբ ստացվել է 30.01.2016թ-ին: Սակայն, անհասկանալի պատճառներով ծրարը հետագայում հայտնվել է Արթուր Մարդոյանի բնակարանի դռան մոտ: Բացելով ծրարը, Արթուր Մարդոյանը տեղեկացել է Ա/Ձ Կառլեն Մարդոյանի վերաբերյալ կայացված որոշման մասին:

Արթուր Մարդոյանը նշեց, որ նախկինում «Կառլեն Մարդոյան» ՍՊԸ-ն պատկանել է իր հորը՝ Կառլեն Մարդոյանին, որը, սակայն, 2000 թվականների սկզբին այն վաճառել է և վաճառելուց հետո նշված ընկերության հետ որևէ կապ չի ունեցել:

Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 13.10.2015թ-ի թիվ 194/06 որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների խախտմամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի բ) կետի համաձայն՝ վարչական ակտը պետք է պարունակի վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը:

Քննարկվող դեպքում Որոշումը կայացվել է վերոգրյալ իրավանորմի պահանջների խախտմամբ, այն է՝ Որոշման մեջ սխալ է նշված դրա հասցեատիրոջ անվանումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 13.10.2015թ-ի թիվ 194/06 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ